

Տեղեկատվական ամփոփագիր		
Ազգային հիփոթեքային վարկ		
Վարկի նպատակը	Անշարժ գույքի ձեռքբերում, կառուցապատում	Անշարժ գույքի վերանորոգում
Վարկի արժույթ	ՀՀ դրամ	
Մայր գումարի արտոնյալ ժամկետ	0-6 ամիս	
Վարկի գումար	! Կիրառվում է միայն «Ջերմ օջախ» վարկատեսակի համար 3,000,000-60,000,000 ՀՀ դրամ	
Վարկի ժամկետ	Գույքի ձեռքբերում, կառուցապատում	Վերանորոգում
	120-240 ամիս	60-120 ամիս
** Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք /հաստատուն/	Գույքի ձեռքբերում, կառուցապատում***	Վերանորոգում
	120-180 ամիս՝ 13%* 181-240 ամիս՝ 14%*	60-84 ամիս՝ 13,5%* 85-120 ամիս՝ 14,5%*
	* Ձեռքբերման կամ կառուցապատման 35,000,000 ՀՀ դրամից ավել վարկերի և/կամ ՊԵՀ գործակիցը 45%-60% լինելու պարագայում տոկոսադրույքը սահմանվում է համապատասխանաբար՝ 15,5% և 16,5%, իսկ վերանորոգման դեպքում 16% և 17%: ** Եթե վարկը բավարարում է էներգաարդյունավետության չափանիշներին ապա տոկոսադրույքը համապատասխան տոկոսադրույքից 0,5%-ային կետով ցածր է սահմանվում, բացառությամբ Ջերմ օջախ վարկատեսակի: *** Գույքի ձեռքբերման /իրավունքի գրավ, փուլային վարկ/ և կառուցապատման վարկերի դեպքում վարկի տոկոսադրույքը համապատասխանաբար սահմանվում է 3 տոկոսային կետով բարձր, մինչև վարկի վերաֆինանսավորումը:	
Վարկի տարեկան փաստացի Տոկոսադրույք	120-180 ամիս՝ 13.8-14.6% 181-240 ամիս՝ 13.5-15.5%	60-84 ամիս՝ 14.4-15.7% 85-120 ամիս՝ 15.5-16.5%
! «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի և վերջինիս հետ փոխկապակցված կազմակերպությունների աշխատակիցների համար գործում է սույն վարկատեսակի համար սահմանված տարեկան անվանական տոկոսադրույքից 1 տոկոսային կետով ցածր դրույքաչափը:		
Ապահովվածություն	<ul style="list-style-type: none"> Ձեռքբերվող/ կառուցապատվող/ վերանորոգվող անշարժ գույք Կարող է պահանջվել այլ ապահովման միջոց ! (Հիփոթեքի պայմանագիրը վավերացվում է նոտարական կարգով)	<ul style="list-style-type: none"> 300,001-1,500,000՝ 1 երաշխավորություն 1,500,001 - 3,000,000՝ 2 երաշխավորություն
Ժամկետանց մայր գումարի տույժ	0.1% օրական	
Ժամկետանց տոկոսի տույժ	0.13% օրական	
Վարկի տրամադրման վճար	Չի պահանջվում	
Վարկի վաղաժամկետ մարում	<ul style="list-style-type: none"> Վարկառուն իրավունք ունի ժամկետից շուտ կատարելու վարկի ամբողջական կամ մասնակի մարում Վաղաժամկետ մարման տույժ Չի կիրառվում 	
Մարման եղանակ	Անուփոփոխային /մայր գումարի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ վճարում/	
Կանխավճար /միայն ձեռքբերման վարկերի համար/	<ul style="list-style-type: none"> Գույքի գնահատված շուկայական արժեքի նվազագույնը 30% Կամ 10%, եթե. <ol style="list-style-type: none"> գրավադրվում է լրացուցիչ բնակելի անշարժ գույք կամ առկա է պարտավորության ապահովագրություն ձեռքբերվող բնակելի անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքի 30%-ի և Վարկառուի կողմից 10% կամ ավել կատարված կանխավճարի տարբերության չափով 	

Վարկ/ Գրավ առավելագույն արժեք	<p>Ձեռքբերման/ կառուցապատման վարկերի համար.</p> <ul style="list-style-type: none"> Գույքի գնահատված շուկայական արժեքի 70% Կամ 90%, եթե. <p>1. գրավադրվում է լրացուցիչ բնակելի անշարժ գույք, ընդ որում Վարկի գումարը չի կարող ավել լինել քան անշարժ գույքերի ընդհանուր արժեքի 70%-ը կամ</p> <p>2. առկա է պարտավորության ապահովագրություն ձեռքբերվող բնակելի անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքի 30%-ի և Վարկառուի կողմից 10 կամ ավելի տոկոսի չափով կատարված կանխավճարի տարբերության չափով</p> <ul style="list-style-type: none"> Գույքի շուկայական արժեքի 70% <p>Ընդ որում Գույքի գնահատված շուկայական արժեքի և ձեռքբերման գնի տարբերության դեպքում հաշվի է առնվում դրանց նվազագույն արժեքը</p>
Գրավի գնահատում	Գրավը ենթակա է գնահատման Բանկի հետ համագործակցող գույքի գնահատում իրականացնող անկախ գործակալության կողմից
Ապահովագրություն	<ul style="list-style-type: none"> Ձեռք բերվող/կառուցապատվող/վերանորոգվող անշարժ գույքի ապահովագրություն Վարկառուի դժբախտ պատահարներից ապահովագրություն Չկատարված կանխավճարի գումարի (ՉԿԳ) ապահովագրություն (անհրաժեշտության դեպքում) <p>! Ապահովագրությունն իրականացվում է վարկի մնացորդի չափով հոգուտ Բանկի Վարկի գործողության ողջ ընթացքում և չի տարածվում Ջերմ օջախ վարկատեսակի վրա:</p>
Վարկառու	21-65 տարեկան << քաղաքացի և ռեզիդենտ ֆիզիկական անձ, որի տարիքը վարկի մարման վերջնաժամկետին չպետք է գերազանցի 65 տարեկանը
Համավարկառու	18-65 տարեկան << քաղաքացի և ռեզիդենտ ֆիզիկական անձ: Համավարկառու կարող են լինել Վարկառուի՝ հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ, եղբոր ամուսինն ու երեխաները:

! Նախքան պայմանագրի կնքումը Կազմակերպությունը Ձեզ կտրամադրի հիփոթեքային վարկի էական պայմանների անհատական թերթիկը, որում ներկայացված են Ձեզ տրամադրվելիք վարկի էական պայմանները:

Ծանոթություն

- Սույն սակագների շրջանակներում տրամադրվող ծառայություններից օգտվելու նպատակով վարկառուն՝ ստորև նշված երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարում է հետևյալ չափով.
 - Անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10,000 ՀՀ դրամ,
 - Իրավունքի պետական գրանցման վճար՝ 26,000 – 52,000 ՀՀ դրամ,
 - Պայմանագրի նոտարական վավերացման վճար՝ 12,000-30,000 ՀՀ դրամ,
 - Անշարժ գույքի ապահովագրության վճար՝ 0.15% վարկի մնացորդային գումարի չափով,
 - Դժբախտ պատահարներից ապահովագրության վճար՝ 0.15% վարկի մնացորդային գումարի չափով,
 - Չվճարված կանխավճարի գումարի (ՉԿԳ) ապահովագրության վճար՝ 1.8-2% ՉԿԳ փաստացի մնացորդային գումարի նկատմամբ/գործում է մինչև ՉԿԳ-ի ամբողջական մարումը/,
 - Գրավադրվող գույքի գնահատման վճար՝ 15,000-25,000 ՀՀ դրամ:
- Անկախ սույն պայմաններում նշված 3-րդ անձանց վճարների դրույքաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել:
- Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:
- Վարկը տրամադրվում է անկանխիկ, միանվագ, իսկ վերանորոգման կամ կառուցապատման կամ առաջնային շուկայից բնակելի անշարժ գույքի ձեռք բերման վարկերի դեպքում կարող է նաև տրամադրվել փուլային եղանակով/տրանշներով:
- Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև Կազմակերպության հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների և անկախ գնահատողների ցանկը սահմանվում են առանձին Հավելվածներով:
- Վարկը տրամադրվում է Բանկի Գլխամասային գրասենյակում և Բանկի բոլոր մասնաճյուղերում բացառությամբ «Չվարթնոց» և «Տիգրան Մեծ» մասնաճյուղերի:
- Վարկի տրամադրման դրական որոշման կայացման գործոններն են.
 - Վարկառուի, Գրավի և Երաշխավորի (առկայության դեպքում) համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին,
 - Վարկառուն հայտի ներկայացման օրվա դրությամբ չպետք է ունենա ժամկետանց պարտավորություններ և պետք է դասակարգված լինի «Ստանդարտ» դասով,
 - Ձեռքբերման վարկերի դեպքում վաճառողը և գնորդը միևնույն ընտանիքի անդամ չեն կարող լինել: Ընդ որում սույն պայմանների իմաստով ընտանիքի անդամ են հանդիսանում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ, եղբոր ամուսինն ու երեխաները:
 - Դիմելու պահին նախորդող 12 ամիսների ընթացքում ժամկետանց պարտավորությունների հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը:
 - Տնային տնտեսությունները պետք է վերանորոգման վարկերի ավելի քան 40%-ը ուղղեն էներգաարդյունավետության բարձրացման համար նախատեսված և նյութերի/պարագաների ձեռքբերմանը, այդ թվում՝ մինչև վարկի գումարի 20%-ը կարող են ուղղել էներգախնայող կենցաղային սարքավորումների ձեռքբերմանը:

8. Վարկի մերժման գործուններն են.

Վարկառուի և/կամ Գրավի անհամապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին և անբավարար եկամուտները:

9. Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում, վարկառուին տեղեկացում մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում:

10. Վարկի տրամադրում՝ պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո մինչև 2 աշխատանքային օրվա ընթացքում:

11. Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Կազմակերպության կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկին Վարկային պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, սպասարկման վճարների, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:

12. Հաճախորդի կողմից վարկի վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են վարկի տոկոսագումարները, առկայության դեպքում նաև սպասարկման վճարները, եթե վերջինս հաշվեգրվում է օրական կտրվածքով, իսկ 3-րդ անձանց կատարված վճարները ենթակա չեն նվազեցման:

13. Քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ ծառայությունների տրամադրման պայմանները և սակագները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.fastbank.am, ինչպես նաև տեղադրված են Բանկի գործունեության վայրերում:

14. Վարկային պարտավորությունները վարկառուի կողմից չկատարվելու դեպքում Բանկն իրավունք ունի երաշխավորից պահանջել կատարելու վարկային պարտավորությունները, ինչպես նաև չկատարման հետևանքով վատանալու է երաշխավորի վարկային պատմությունը և հնարավոր է վերջինս զրկվի իր սեփական գույքից:

15. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՒՆԱԳԱՆՁՎԵԼ:

ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՅՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍ Է ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՀԱՆՋԻ ԵՎ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻՑ, ԱՊԱ ՎԱՐԿԱՑՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱԿԱՍ ԳՈՒՄԱՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ:

16. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅՂ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՍ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՂ՝ ԱՊԱԳԱՑՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

17. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԶՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ (www.fastbank.am):

18. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍԱՑԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍԻ ՌԻՍԿԵՐԻՑ և ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

19. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵՂ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՐԳՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՅՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍՎՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: